

ԵՐԿՈՒ ԽՈՇՈՐ ՉԱՐԻՔ

Վերջին ժամանակներս լույս տեսած եվրոպական մի քանի խոշոր գիտնական աշխատությունների մեջ ընդհանուր ուշադրություն է գրավել ֆրանսիական երկու գիտնականների՝ Բինեի և Անրիի գիրքը՝ ժամանակակից սերնդի մտավոր հոգնածության հարցի մասին: Մտավոր հոգնածությունը և ներվոտությունը, մեր դարի այս բնորոշ գծերը, այնքան մեծ զարգացումն են ստացել, որ լուրջ վտանգ են սպառնում մարդկության ապագային: Եթե շաջողվի արմատական միջոցներ ձեռք առնել նրանց դեմ, ապագա սերունդների ֆիզիկական և մտավոր այլասեռումն անխուսափելի կդառնա, որովհետև, ինչպես ցույց են տալիս երկու գիտնականների ուսումնասիրությունները, ներվոտությունը և մտավոր հոգնածությունը ազդում են մարդու ոչ միայն ֆիզիկական, այլև մտավոր զարգացման վրա և ազդում են աղետալի կերպով:

Բայց ինչի՞ց առաջ եկավ մեր դարի անօրինակ ներվոտությունը և մտավոր հոգնածությունը, ի՞նչն այնքան նպաստեց նրանց հսկայական զարգացման: Առաջին հարցին պատասխանում է գերմանացի պրոֆեսոր էրի աշխատությունը, որ ֆրանսիացի երկու գիտնականների աշխատության հետ միասին՝ առատ նյութ է մատակարարում որոշ շափով լուծելու հարուցված հարցը: ներվոտությունն

սուտը է եկել այն բազմաթիվ նշանավոր պատմական գեղեցիկ, որոնք ցնցեցին մեր դարում մի շարք սերունդներին մտքերը. ֆրանսիական մեծ հեղափոխությունը, Նապոլեոնյան պատերազմները, մտքերի շարժումը մեր դարի կեսում, տեխնիկական գիտությունների հսկայական զարգացումն, կյանքի կենցաղավարության արմատական փոփոխությունը շոգու և էլեկտրականության ազդեցության տակ, գոյության կռիվի ասպարեզում արտահայտած սարսափելի եռանդը, ազգաբնակչության խոշոր կենտրոնների աճումն, կրոնի կռիվն աճող նյութապաշտության դեմ, սոցիալական վարդապետությունների տարածումն, կապիտալիզմի և պրոլետարիատի ահագին զարգացումն—այդ բոլորը խոր ստվածություն գործեց մարդկանց ներվային սիստեմի վրա և անջնջելի հետք թողեց: Գալով այն հարցին, թե ներկոտությունն ի՞նչ տեսակ է տարածված հասարակական և սոցալգրական խմբերի մեջ, հետազոտություններն ապացուցանում են, որ, սովորաբար, հասարակության բարձր դասակարգերը և մտավոր աշխատության ներկայացուցիչներն են տանջվում այդ ցավով, իսկ ազգագրական խմբերի վերաբերմամբ նա ավելի շատ տարածված է հրեաների և ամերիկացիների մեջ: Առաջինները ամբողջ դարեր հուզմունքներով լի կյանք և պատմություն են ունեցել, իսկ ամերիկացիները վարել են շարունակ տենդային կյանք՝ ոսկի ձեռք բերելու նպատակով:

Գալով մատաղ սերնդի մտավոր հոգնածության հարցին, Քինե և Անրի վճռականապես հայտնում են, որ այդ մեծ շարիրի պատճառը ժամանակակից դպրոցն ու կրթական սիստեմն է, գլխավորապես գիմնազիաներն ու համալսարաններն են: Ժամանակակից դպրոցը հաջորդաբար տանում է մատաղ սերունդները դեպի այլասեռումն: Այսօր ամեն ոք՝ մեծ թե փոքր, հարուստ, թե աղքատ, տղա, թե աղջիկ ձրգտում են ուսում ստանալու Մնողների միակ ձգտումն է կրթության տալ իրանց զավակներին՝ դրոված զանազան պատճառներից: Այդ պատճառով բոլոր քաղաքակիրթ երկրներում դպրոցները լցված են աշակերտներով և ահագին փանակության շնորհիվ՝ ուշադրություն չէ դարձվում ուսման

որակութեան, հատկութեան վրա: Միջնակարգ դպրոցներից դուրս են գալիս բոլորովին անպատրաստ պատանիներ, օրիորդներ, որոնք անցնելով համալսարան, չեն կարողանում, նույն պատճառներով, որևէ հիմնավոր կրթություն ստանալ: Ուսման լայն պրոգրամները թե՛ միջնակարգ և թե՛ բարձր դպրոցներում, դպրոցի հակաառողջական պայմանները, օդից, լույսից զրկված նեղ դասարանները ոչ միայն հոգնեցնում են ուսանողների շարունակ լարված մտքերը, այլև բոլորովին քայքայում են նրանց ջղախին սիստեմը:

Եվ որովհետև դպրոցն ինքն է հանդիսանում աղբյուր այդ բոլոր շարիքների, նա ինքն էլ պետք է լինի նրանց բժշկողը: Բինե և Անրի եզրափակում են, որ այժմ խնդիրը ոչ թե մանկավարժության հին սիստեմը բարեփոխելու մեջ է կայանում, այլ նրա մեջ, որ պետք է մշակել բոլորովին նոր սիստեմ և միանգամ ընդմիջտ դեն շարտել հին սիստեմը, իբրև անպետք: Հին մանկավարժությունը, որով այսօր ղեկավարվում է դպրոցը, հիմնված է ամբողջովին հնութեան կանխակալ կարծիքների, հեղինակությունների և ընթացիկ աֆորիզմների վրա. նոր մանկավարժությունը, որ կոչված է թարմացնելու մարդկային միտքը, պետք է հիմնվի դիտողության և փորձի վրա, այսինքն այն սյունների վրա, որոնց վրա հիմնված է ամբողջ ժամանակակից գիտությունը:

Եվ այսպես՝ նոր, արմատական դպրոցը մի կողմից, իսկ անցիալական կյանքի ավելի արդար և խելացի կազմակերպությունը մյուս կողմից, — ահա զորեղ դարմանները ներվոտության և մտավոր հոգնածության դեմ: